ջակայ նահանգները, նուաճել են Նայիրի երկրի այլ եւ այլ գաւառները, նրանց հին նախարար կալուածատէրերին կոտորել, ջնջել, իրենք են գրաւել սրանց գոյքը եւ բազմոցը: Այս նուաճումը նկատելի է, Բաբերդոնից, Բալախոից հետզհետէ շարունակուել է դէպի արեւմուտք Եկեղեաց գաւառը, Անգեղտունը, Ծոփաց աշխարհը, Տուրուբերանը եւ դէպի Վասպուրական եւ արեւելք, դերիշխել եւ իրենց բաժն են վերցրել աշխատաւորութիւնից: Նայիրի երկրի քրմապետներն ու իշխանաւորները աստիճանաբար դլորուել եւ նրանց տեղերը գրաւել են Ճորոխի Աւազանից առաջացած բազնապետները, մոգպետները, սպարապետներն ու ասպետները, սրանցից կազմակերպուել են Խալդական աշխարհի նախարարութիւնը թագադիրներն ու թագաւորները, աշխարհակալներն ու ինքնակալները, այնպէս որ Արշակունիների շրջանում նկատուած նախարարական տոհմերի մեծագոյն մասը անխզելի կապերով, արիւնակցական-ազգակցական շղթաներով միացած է Ճորոխի ափերին: Ո՛չ միայն մեր հին պատմաբանների մութ ցուցումներով, այլ նոյն իսկ այսօր գոյութիւնը պահպանած բերդերի, դղեակների անուններն ու աւերակները ստիպում են համոզուելու, որ հին Հայաստանի-Խալդէական աշխարհի իւրաքանչիւր նախարարական տուն ունեցել է իր պատսպարան